

Գեղարքունիքի մարզպետն այցելեց Գավառի վերանորոգվող երիտասարդական կենտրոն

18.07.2017

Հուլիսի-18 ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն այցելեց Գավառի երիտասարդական բազմաֆունկցիոնալ կենտրոն, որտեղ ծանոթացավ ու անձամբ մասնակցեց երիտասարդների կողմից իրականացվող շինարարական աշխատանքներին: «Գեղարեզ» կրթամշակութային ՀԿ-ի նախագահ Գրիգոր Դաշոյանը մարզպետին պատմեց, որ երիտասարդական կենտրոն ունենալու գաղափարը հնարավոր է եղել կյանքի կոչել Գավառի քաղաքապետարանի աջակցությամբ, որի կողմից հատկացվել է տարածք, իսկ մնացած աշխատանքները կատարվում են քաղաքի երիտասարդների և նրանց ծնողների աջակցությամբ:

Ըստ կենտրոն հաճախող երիտասարդների՝ կենտրոնն ունենալու է կինո և ազգային պարերի դահլիճ, ցուցասրահ, ռազմահայրենասիրական դաստիարակության լսարահ և այլ սենյակներ: „Վորլդ Վիժն Հայաստան,, Գավառի տարածքային ծրագրի կողմից կենտրոնում հիմնվելու է դասընթացների և ժողովների անցկացման սրահ, որն հագեցած է լինելու համապատասխան գույքով եւ սարքավորումներով: Իսկ «ՄՔԱՅ» երիտասարդական ակումբի երիտասարդների կողմից իրականացվող „Համայնքային Ծառայության Ուսումնական Ծրագրի,, շրջանակներում փոխվել են պարի սրահի պատուհանները: Կենտրոնում սոցիալական ձեռներեցության շրջանակներում հիմնվելու է սննդի պատրաստման և մատակարարման կետ: Այստեղ նախատեսված է նաև կազմակերպել երիտասարդների կարողությունների զարգացման և համայնքային այլ ծրագրեր: Հիմնանորոգվող կենտրոնը հնարավորություն կտա, որպեսզի քաղաքի պատանիները և երիտասարդներն այստեղ իրենց ազատ ժամանցը կազմակերպեն: Այն նաև կհանդիսանա կրթական, մշակութային, ռազմահայրենասիրական դաստիարակության եզակի կենտրոն Գավառի տարածաշրջանում: Նորաստեղծ երիտասարդական կենտրոնը մասամբ կլուծի նաև երիտասարդների զբաղվածության հարցը: Իրականացվող շինարարական աշխատանքները նախատեսված են ավարտել այս տարվա սեպտեմբեր ամսին:

Կարեն Բոթոյանը ողջունեց երիտասարդների այս քայլը և նշեց, որ համայնքների զարգացումն առանց երիտասարդների ստեղծագործ մտքի ու ակտիվ ներգրավվածության հնարավոր չէ պատկերացնել: Մարզպետը նաև պատրաստակամություն հայտնեց իր լիազորությունների շրջանակներում օժանդակել կենտրոնի գործունեությանը և երիտասարդների հետաքրքիր նախաձեռնությունների կյանքի կոչմանը: Այցի շրջանակներում Գեղարքունիքի մարզի ղեկավարը եղավ նաև Գավառի քաղաքային գրադարանում, շրջեց սրահներում, զրուցեց աշխատակիցների հետ, իր տպավորությունները կիսեց գրադարանում՝ ընթերցողի համար ստեղծված հարմարավետ պայմանների վերաբերյալ: